




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

47

Պոլեմարհեր բոլոր լեհերների, միացե՛ք


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
„ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ“-Ի № 2 (5)

Հ. Փիլոսոֆյան լեզվ Ա. Մեկունյան

ԻՆՉՈՒ ՁԵՌՆՏՈՒ ՅԵ  
ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՅՈՒՂ ՅԵՎ  
ՁՎԵՑՑԱՐԱԿԱՆ ՊԱՆԻՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

ՅԵՐԵՎԱՆ  
1925

Խմբագրութեամբ  
ՀԱՂԺԱՂԿԱՄԱՅԻ ԽՄԲ. ԿՈՂԼԵԳԻԱՅԻ



11-241049/90

Գրատեպլար. № 1508 Տրեստի I Տպար. Պ. 1010 Տիրած 10.000

ՔՆՉՈՒ ԶԵՌՆՏՈՒ ՅԵ ԳՐԴԱՐԱՆՈՒՄ ՅՈՒՂ ՅԵՎ ԵՎԵՅ-  
ՅԱՐԱԿԱՆ ՊԱՆԻՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Գյուղատնտեսութեան վորեւ ճյուղով զբաղվելու համար անհրաժեշտ են համապատասխան բնական պայմաններ:

Ամեն մի գյուղացի լավ գիտե, վոր Զամբարակի, Լուռու, Նոր-Բայազեզի և Հայաստանի մյուս լեռնոտ շրջաններում անհնարին ե և անմտութիւն ել կլինեն զբաղել խաղողի, բամբակի մշակութեամբ:

Սաղողի, բամբակի և չալթուկի մշակութեամբ հնարավոր ե պարապել միայն տաք շրջաններում, ինչպես են սրինակ՝ մեր յերկրում Յերեվանի, Եջմիածնի և Մեղրու տափարակները: Տափարակ շրջանների գյուղացիութիւնը լավ ե հասկանում, վոր խաղողի, բամբակի և չալթուկի մշակութեամբ ավելի ձեռնտու յե պարապել, քան ցորենի, գարու և կորեկի մշակութեամբ: Միևնույն ժամանակ վոչ մի խելացի և իր ոգուտը հասկացող գյուղացի այդ շրջաններումը, վորտեղ չկան լավ արոտատեղեր և խոտհարքներ, չի պարապի անասնապահութեամբ:

Դժբախտաբար նույնը չի կարելի ասել մեր լեռնային շրջանների գյուղացիութեան մասին: Նա դեռ չի հասկանում, վոր ունենալով լավ խոտհարքներ և արոտատեղեր՝ ավելի շահավետ ե լավ կաթնասու տնտեսներ պահելը, քան հացաբույսերի մշակութեամբ զբաղվելը:

Պարզ ե, վոր յեթե մեր լեռնային շրջանների գյու-

ղացիութիւնն այս բանը հասկանար, ապա չէր շարունակի հացահատիկները անողուտ մշակութեամբ զբաղվելը, վորոնք համարյա ամեն տարի վոչնչանում են ցրտահարութիւնից, յերաշտից ու կարկառից և վորի հետեւանքը լինում է այն, վոր մեր լեռնային շրջանների գյուղացիները շարունակ քաղցած են, քաղցած են նրանց հետ և իրենց անասունները: Բայց յեթե նա ի նկատի ունենար իր շրջանի պայմանները և պարապեր անասնապահութեամբ, այդ դեպքումնա իր յեկամուտով լավ վիճակում կպահեր թե իր ընտանիքը և թե իր անասունները:

Յաջն այն է, վոր մեր լեռնային շրջանների գյուղացիութիւնը կաթնատու տավարի պահելը դեռ ևս չի համարում իր տնտեսութեան հիմքը. նա այդ տավարը պահում է ի միջի ալոց, և յեթե լեռնային շրջաններում տավարի քանակն ավելի յե, քան տափարակներում, դրա պատճառն ել այն է, վոր լեռնային շրջաններն անասնապահութեան համար ավելի հարմար են:

Լեռնային շրջանի գյուղացուն կարող է ծիծաղել թվալ, վոր իր ունեցած մի քանի կովով հնարավոր է պահել և կերակրել իր ընտանիքը:

Տեսնենք, թե վորքան արդարացի կլինի գյուղացին այդ դեպքում և ինչ կարող են տալ նրա ունեցած կովերը:

Նախ տեսնենք, թե ինչ է տալիս մեր կովն իր այժմյան պահպանութեան պայմաններում:

Պետք է խոստովանել, վոր վերջ մեր կովերը պահում ենք շատ վատ: Ո՞վ չգիտէ, վոր մեր կովերը տանելի չափով կերակրվում են միայն ամառը, այն ել շնորհիվ լեռնային շրջանների հարուստ և հյութալի արոտների, իսկ ձմեռը միայն չոր դարմանով կերակրվող մեր կովերն

այնպիսի դրութեան են հասնում, վոր դարնանը հագիվհաղ են վոտների վրա կանգնում և, ինչպես իրենք գյուղացիք են ասում՝ «պոչից բռնելու յեն դառնում»:

Պարզ է ուրեմն, թե ինչ արդյունք կտա այդպիսի պայմաններում պահված կովը: Գարնան արոտի բաց թողած կովը մեկ — յերկու ամսում հագիվ վերականգնում է իր կորցրած միսն ու ճարպը:

Այդ տեսակ կովը կթվում է ամենաշատը 6-7 ամիս, թող լինի 7 ամիս: Այս դեպքում նա մայիսից մինչև սեպտեմբերի 1-ը, հաշվելով, վոր միջին հաշվով որական տալիս է 10 ֆունտ կաթ, 4 ամսում ընդամենը կտա մոտ 30 փութ:

Առհասարակ մեր գյուղացին իր ունեցած կաթից պատրաստում է յուղ և յերեսը քաշած պանիր:

30 փութ կաթից նա ոտանում է 1 փ. 4 ֆ. ջրալի և վատ կարագ, 3 փ. ել յերեսը քաշած պանիր:

Ստացված յուղն ու պանիրը ծախվում են սուրբերում կամ տարվում են մոտիկ շուկան: Այս տարվա գներով հաշված, գյուղացին ամենաշատը պետք է ստանա մի փութ յուղի համար՝ 20 ուրբի, իսկ յերեսը քաշած մի փութ պանրի համար վոչ ավելի, քան 3 ուրբ:

Այսպիսով գյուղացին ամառվա ընթացքում կստանա. —

1 փ. 4 ֆ. յուղի համար, փութը 20 ու. հաշված — 22 ու.

3 փ. յերեսը քաշած պանրի համար փ. 3 ու. » — 9 »

Ընդամենը 31 ու.

Գյուղացիք լավ գիտեն, վոր սեպտեմբերից սկսած կովերի կաթը պակսում է: Այդ ժամանակից արոտն ել պակասում և վատանում է Սեպտեմբերից մինչև դեկտեմբերի 1—ը կովը միջին հաշվով որական տալիս է մոտ

6 ֆ. կաթ, իսկ 3 ամսուս մոտ 13 փ. 20 ֆ. (540 ֆ.):  
 Ի նկատի ունենալով, վոր աշնան կաթն ավելի յուղալի յե-  
 լինում, այդ պատճառով ել կարգն ավելի յե ստացվում.  
 այս դեպքում 13 փութ 20 ֆ. կաթից կստացվի 23 ֆ.  
 կարագ և 1 փ. 12 ֆ. յերեսը քաշած պանիր:

Գյուղացու յեկամուտն իր կովից աշնան 3 ամ-  
 սում կլինի.—

23 ֆ. յուղ, հաշված ֆունտը 60 կ. = 13 ո. 80 կ.

(ավելի թանգ, քան ամառը):

1 փ. 12 ֆ. յերեսը քաշած պանիր

ֆունտը 10 կ. հաշված = 5 ո. 20 կ.

(ավելի թանգ, քան ամառը):

Ընդամենը 19 ո.

Այսպիսով ամբողջ տարվա համար գյուղացին իր  
 կովից յեկամուտ կունենա ամառվա ամիսներում ստացած  
 31 ուրբլին և աշնան ամիսներում ստացած 19 ո., ընդա-  
 մենը — 50 ուրբլի:

Գուցե ավելի ձեռնտու լինի ունեցած կաթից վոչ  
 թե յուղ, այլ անքաշ պանիր պատրաստել, ինչպես այդ  
 շատերն են անում: Չեռնովությունը պարզելու համար  
 մի փոքրիկ հաշիվ կազմենք:

Ամառվա ամիսներում ստացված 30 փութ կաթից  
 կարելի յե պատրաստել մոտ 3 փ. 30 ֆ. անքաշ թուշի (զլուխ)  
 պանիր, վորի փութը յեթե հաշվենք 10 ո., ամբողջ պա-  
 նիրը կարժենա 37 ուրբլի 50 կ.: Յեթե ընդունենք, վոր աշ-  
 նան ամիսների կաթը նա ոգտադործում և այդ ձևով, այն  
 ժամանակ նրա տարեկան յեկամուտը մի կովից կլինի  
 56 ո. 50 կ.:

Ի՞նչ են ասում այս թվերը. ձեռնառն յե գյուղացուն  
 իր վարած կաթնատնտեսության ներկա ձևը, — ի հարկե  
 վոչ, — յեթե հաշվենք, թե այժմ մեկ կովի վրա ինչքան  
 ծախս ե լինում, ինչպես որինակ՝ խոտն ու դարմանը,  
 գյուղացու և իր ընտանիքի թափած աշխատանքի արժեքը,  
 արոտատեղերի վարձը, դոմի և մաքագի նորոգման ծախսը,  
 հարկը և այլն, ապա միանգամայն պարզ կլինի, թե վոր-  
 քան անձեռնտու յե այժմյան ձևով կաթնատու տավար  
 պահելը, մանավանդ յեթե ի նկատի ունենանք, վոր կովը  
 վոչ միայն պետք ե ծածկե վերև հիշված ծախսերը, այլ  
 և այդ ծախսերը ծածկելուց հետո ոգուտ պետք ե տա  
 հոգալու գյուղացու ապրուստը:

Ի հարկե, յեթե գյուղացին պիտի շարունակի այժմ-  
 յան ձևի անտանապահությունը, այն դեպքում ծիծաղելի  
 կլիներ, յեթե մենք ասեյինք, վոր նա հացահատիկներ չպիտի  
 ցանի: Ինչքան չլինի, գյուղացին իր տնտեսությունից  
 վորոշ քանակությամբ հաց ե ստանում, մինչդեռ, ինչպես  
 պարզվեց, իր կաթնատու տավարից ստացած արդյունքը  
 հազիվ ծածկում ե նույն տավարի վրա արված ծախսերը:

Ի՞նչ միջոց կա այս դրությունից դուրս գալու համար:

Ձանազան կուլտուրական յերկրների գյուղացիների  
 փորձն այս ասպարեզում և նրանց տնտեսական բարեկե-  
 ցիկ վիճակը կարող են լավ որինակ ծառայել մեր գյուղա-  
 ցու համար:

Վերցնենք որինակ՝ Շվեյցարիան. այս յերկիրը տա-  
 րածությամբ ավելի փոքր ե, քան Հայաստանը, բայց նրա  
 գյուղացիությունը շատ ավելի հարուստ ե, քան մերը:  
 Յեվ այս յերկրի գյուղացիներն ապրում են գլխավորապես  
 կաթնատնտեսությամբ և յեթե ցանքս ել անում են, այդ

եւ անում են վոչ թե իրենց, այլ կաթնատու կովերին անհարար կեր պատրաստելու համար:

Շվեյցարիայի գյուղացին մեր գյուղացունման հասարակ յուղ և պանիր չի պատրաստում, այլ պատրաստում է բարձր տեսակի յուղ և պանիր, ստանում է շատ ավելի ոգուտ, քան ստանում ենք մենք: Այն աղի և չոր պանիրը, վոր պատրաստում ենք մենք, յեվրոպացին բերանը չի դնի. նրանց պատրաստած պանիրը փափուկ, աղասակավ հնուրբ է: Այդ պանիրն մենք այստեղ ասում ենք ռվելցարական: Այս տեսակի պանիրից պատրաստում են նալի մեղ մոտ՝ Լուվա գործարաններում: Այստեղ գյուղացիները միացել և կազմել են արտելներ ու բաց արել գործարաններ: Բանն այն է, վոր շվեյցարական պանիր չի կարելի պատրաստել վորք քանակությամբ կաթից, ինչպես մեր տեղական պանիրները:

Բացի պանիրից նրանք պատրաստում են նալե յուղ, բայց վոչ մաճնից կամ թթված արածանից, ինչպես մենք ենք պատրաստում, այլ՝ քաղցրից, վորն ստանում են սերգատի միջով կաթը անցկացնելով: (Սերգատը մի գործիք է, վորը կաթից բաժանում է նրա բոլոր յուղային մասերը): Նույն քանակությամբ կաթից սերգատով ստացած սերն ավելի շատ է լինում, քան մեր գյուղերում պատրաստվող յեղանակով:

Այժմ տեսնենք, թե ինչ արդյունք կտա 50—56 ու. 50 կ. յեկամուտ տվող մեր կովը, յեթե նրա կաթից գործարանում պատրաստենք շվեյցարական պանիր և քաղցր սերի կարագ:

30 փութ կաթից գործարանում կարելի յե պատրաստել 2 փ. 20 ֆ. շվեյցարական պանիր՝ հաշվելով ամեն մի

փութ պանիրն 12 փ. կաթ: Ի նկատի ունենալով այս տարվա գները, շվեյցարական պանրի փութը պիտի հաշվել 35 ու., նշանակում է մեկ կովից ստացած 2 փ. 20 ֆ. պանիրը կարժենա 87 ու. 50 կ.:

Շվեյցարական պանիր պատրաստելուց հետո նրանից մնացած շիճուկը պարունակում է ելի յուղ, թեև քիչ քանակությամբ: Այս դեպքում 30 փ. կաթից պանիր պատրաստելուց հետո, կարող ենք ստանալ նաև 9 ֆունտ կարագ:

Այս կարագը կոչվում է պանրատակի կարագ, վորը թեև քաղցր արժանի կարագից ավելի ցածր հատկություն ունի, բայց և այնպես գյուղացու պատրաստածից ավելի բարձր է: Սրա դիմին ել հաշվենք 60 կուպեկ: Այսպիսով 9 ֆ. կարժենա 5 ու. 40 կ. նշանակում է, վոր մեկ կովը ամառվա ընթացքում մեկ յեկամուտ կտա.— 87 ու. 50 կ. + 5 ու. 40 կ. = 92 ու. 90 կ.:

Յեթե մենք մեր ունեցած աշնան 13 փութ 20 ֆունտ կաթը նույնպես հանձնենք գործարանին, նրանից քաղցր արածանի կարագ պատրաստելու համար (աշնան կաթից շվեյցարական պանիր չեն պատրաստում), կստանանք 27 ֆ., վորի մեկ ֆունտն ալժմյան գներով կարժենա վոչ պակաս, քան 80 կ. այսպիսով մեր ստացած 27 ֆ. կարագը կարժենա 21 ու. 60 կ.:

Բացի կարագից, 13 փ. 20 ֆ. կաթից մենք կստանանք նաև 1 փ. 12 ֆ. յերեսը քաղած պանիր, վորի փութը հաշվելով 4 ու., կստանանք 5 ու. 20 կ.: Ուրեմն՝ աշնան կաթի յեկամուտը կլինի 21 ու. 60 կ. + 5 ու. 20 կ. = 26 ու. 80 կ.: Իսկ 7 ամսվա ընթացքում մեկ կովից ստացած ամբողջ յեկամուտը կլինի 92 ու. 90 կ. + 26 ու. 80 կ. = 119 ու. 70 կ.:

Սակայն նույնիսկ այն դեպքում, յերբ գյուղացին չի ցանկանում իր ունեցած աշխան կաթը գործարանին հանձնել, այլ գործադրում է իր տնտեսութեան մեջ, այդ դեպքումն էլ մեկ կովից ստացած յեկամուտը հավասար կլինի 92 ո. 90 կ. + 19 ո. = 111 ո. 90 կ., այսինքն՝ յերկու դեպքումն էլ կստանանք կրկնակի յեկամուտ, քան յեթե կատարաստելինք տեղական մեր պանիրը և յուղը:

Գյուղացիք մեզ կարող են ասել, վոր այն ժամանակ, յերբ նրանք պատրաստելով տեղական պանիր ու յուղ և մեկ կովից ստանալով 50—56 ո. 50 կ., իրենք նրա պատրաստելու համար ծախսեր չեն անի: Բայց այս դեպքումն էլ, ինչպես և միշտ, մեր գյուղացին սովորութեամբ չունի իր կատարած աշխատանքը և ժամանակը գնահատելու ձիշտ է, վոր գործարանը բավականին ծախսեր ունի, — չէ՞ վոր պետք է վճարել վարպետին, բանվորներին, լուսավորութեան, վառելիքի և այլն:

Հաշվեք և այս ծախսերը:

Լոռվա արտելային գործարանների վորձը ցույց է տալիս, վոր այդ ծախսերը ուղբւուն 12 կոպ. ավելի չեն լինում: Հաշվենք թեկուզ 15 կոպ. և այդ ծախսը հանենք մեր ընդհանուր յեկամուտից:

Յերբ մենք ամբողջ կաթը հանձնում ենք գործարանին, մեր յեկամուտը լինում է 119 ո. 70 կ. վորից ծախս կլինի 17 ո. 95 կոպ. (յեթե ուղբւուն հաշվեք 15 կոպ.), ուրեմն 119 ո. 70 կ. հանելով 17 ո. 95 կ. յեկամուտ կը մնա 101 ո. 75 կ.:

Յերկրորդ դեպքում, յերբ մեր յեկամուտն է 111 ո. 90 կ., ծախս կլինի 13 ո. 93 կոպեկ, վորը հանելով 111 ո. 90 կ. -ից յեկամուտ կմնա — 97 ո. 97 կոպ.:

Յեթե հաշվենք թե ինչ կարժենա կաթի մեկ փութն առաջին և յերկրորդ դեպքում, կտեսնենք, վոր այն դեպքում, յերբ կաթն ամբողջովին վերամշակվում է գյուղացու տնտեսութեան մեջ և հին յեղանակով, նրա փութը կարժենա 1 ո. 13 կ. — 1 ո. 30 կ. իսկ այն դեպքում, յերբ վերամշակվում է գործարանում՝ նրա փութն արդեն կարժենա 2 ո. 25 կոպ. — 2 ո. 34 կ.: Ահա այս բոլոր հաշիվները պարզ կերպով ցույց են տալիս, թե գյուղացիների համար վորքան ձեռնտու յե իրենց կաթը գործարաններում վերամշակել ըվեցարական պանիր և քաղցր արածանի կարագի համար:

Այս յեղանակով բարձրացնելով մեր կովերից ստացված յեկամուտը, մենք միևնույն ժամանակ հնարավորութեամբ ենք ունենում ավելի լավ խնամել և կերակրել նրանց և ստանալ ավելի շատ կաթ, ուրեմն և բարձրացնել մեր կովերի յեկամուտը:

Ինչպես վերն ասացինք, շվեյցարական պանիր պատրաստելու համար հարկավոր է ունենալ մեծ քանակութեամբ կաթ, ամառվա ամիսներին առնվազն որեկան 140 փութ, իսկ այս քանակութեամբ կաթ մեզ կտան մոտ 500 կովը: Այս հանդամանքը ցույց է տալիս, վոր շահավետ կաթնատնտեսութեամբ պարապելու համար անհրաժեշտ է, վոր շատ տնտեսութեաններ միասին կադմեն արտելներ և միացած ուժերով վարեն գործարանային կաթնատնտեսութեան, ձիշտ այնպես, ինչպես անում են որինակ՝ Լոռվա գյուղացիները:

Ի նկատի ունենալով գործարանային կաթնատնտեսութեան խոշոր դերն ու նշանակութեանը մեր գյուղացու տնտեսութեան և անասնապահութեան բարձրացման խըն-

գրում, — Հայաստանի Բանվորա-Գյուղացիական կառավարութիւնը Հայաստանի մի շարք կաթնատնտեսութեամբ զբաղվելու հարմար վայրերում հիմնում ե շվեյցարական պանրի գործարաններ, ցույց տալու համար մեր գյուղացիութեանը՝ գործարանային կաթնատնտեսութեան ոգտավետութիւնն ու առավելութիւնը հանդեպ գյուղացու մինչ այժմ վարած տնտեսութեան: Ու յերբ գյուղացիք տեսնելով և զգալով այդ գործանանների ոգտավետութիւնը, կմիտնան ու կկազմեն այդ գործարանները շարժն արտելներ, այդ ժամանակ ել կառավարութիւնն այդ գործարանները կհանձնի ստեղծված արտելներին, իսկ մինչև վեր գյուղացիք կհասկանան իրենց տնտեսութիւնը բարձրացնելու համար արտելներ կազմելու ոգտակարութիւնը, մինչ այդ նրանք իրենց կաթը պիտի հանձնեն մտտակա գործարանին կամ ամառվա ամիսներին իրենց կովերը պիտի հանձնեն գործարանին՝ կթելու և ինոամելու համար, վերովհետև այդ ձեւով նրանք ավելի շատ կոգտվեն, քան իրենց պատրաստած պանրից ու յուղից:

Գործարաններում ինելու յեն ցեղական ցուլեր, վորոնցից գյուղացիք կստանան լավ հորթեր ու այգւպիսով ել նրանց ունեցած անասունների ցեղն ել աստիճանաբար կաղնվանա և կաթնատվութիւնն ել կբարձրանա:

Կառավարութեան գործարաններն առեւտրական նպատակներ չունեն: Նրանք չեն հիմնվում նրա համար, վոր կառավարութեանը մեծամեծ յեկամուտներ տան: Նրանց նպատակն ե միայն ծառայել գյուղացիութեանը: Գործարանը գնելով գյուղացիներից կաթը, նրանց աղատում ե պանիր ու յուղ պատրաստելու և վաճառելու մեծամեծ

դժվարութիւններից, նրանց աղատում ե զանազան չարչիւների և սղեկուլանտների ճանկերից, մանսվանդ, կըրկնում ենը, գյուղացին գործարանին հանձնած իր կաթի համար ավելի շատ ե ստանալու, քան ինքն եր ստանում մինչև գործարանի բացվելը:

Գործարաններին կից լինելու յեն նայել պետական հարուստ արոտաւեղիներ, վորտեղ նրա կովերը կարածեն լավ արոտներում, ապա և ինքը գյուղացին ել կաղատվի նրանց ինոամելու, կթելու, արոտաւեղիի արժեքի և այժմայեքից ու իր կովի համար ել կստանա օյնքան, վորքան նա կստանար, յեթե կովն ինքը պահեր:

Այսպիսով, յեթե մեր գյուղացիք ցանկանում են բարձրացնել իրենց տնտեսութիւնը և բարելավել իրենց վիճակը, ամենից առաջ պիտի կազմակերպեն կաթնատնտեսական արտելներ: Իսկ յեթե այդ բանը նրանց չի հաջողվելու, ապա իրենց տնտեսութիւնը բարձրացնելու լավագույն միջոցն այն կլինի, վոր նրանք գործարանին հանձնեն իրենց ունեցած կաթը կամ կովերը:

Վոր արտելային կաթնատնտեսութիւնը բարձրացնում ե գյուղացու տնտեսութիւնը, դրա համար իբրեւ լավագույն որինակ կարող ե ծառայել վորքիկ Դանիան, վորը սրանից 50 տարի առաջ մեղ նման մի աղքատ յերկիր եր և վորի անասուններն ել մեր անասուններինման վատ եյին: Սակայն դանիացիք իր ժամանակին հասկացան արտելային հիմունքներով կազմակերպված կաթնատնտեսութեան առավելութիւնները, և կարճ ժամանակի ընթացքում բոլոր գյուղացիները միացան անխտիր և արտելներ կազմեցին: Շնորհիվ այդ հանգամանքին, Դանիայի գյուղացու տնտեսութիւնն ել բար-

ձրացավ և նրանց կովերն ել այժմ հինգ անգամ ավելի  
յեն կաթ տալիս, քան մերը:

Դանիայի, Շվեյցարիայի և նման այլ կուլտուրական  
յերկրների տարիների փորձը պիտի մեր լեռնային  
շրջանների գյուղացիութանը վերջնականապես համոզի,  
վոր իր ունեցած մի քանի կովերը նրան կարող են տըն-  
տեսապես բարեկեցիկ դարձնել: Հարկավոր է միայն, վոր  
նա հասկանա գործարանային կաթնատնտեսութան առա-  
վելութունն իր՝ մինչ այժմ վարած տնտեսութան հան-  
դեսը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0935021

1925

11

24104

ԳԻՆՆ Ե Յ ԿՈԳ.

Իսկել՝ Յերեվան, Հոդժողիսւս:

